VI

ՆԵՐՍԵՍ ՊԱԼԻԵՆՑԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ (XIV Դ.)

Այս բնագիրը գտնվում է, մեղ արդեն ծանոթ, հետևյալ ձեռագրերում №№ 2037, էջ 131ա—133բ (Ա), 2038, էջ 199բ—207բ (Գ), 3079, էջ 203բ—212բ (Դ), 6554, էջ 52բ—60բ (Բ), 7841, էջ 275բ—280բ (Ե).

Բուն նյութին նախորդում է մի փոքրիկ ներածական, որտեղ հեղինակը հիշեցնում է, որ ինքն իր կարողության սահմաններում, ինչպես նշել է Մ. Լեհացու ժամանակագրության թարգմանության հիշատակարանում, կազմելու է հայ իշխանների, թագավորների և կաթողիկոսների ցանկը։[1] Այս հատորում առայժմ բացառում ենք կաթողիկոսներին վերաբերող ցանկը։ Հայ թագավորների և իշխանների այս շարքը սկսվում է Աստվածաշնչի ժամանակագրական սահմաններից՝ Նոյի և նրա որդիների հիշատակությամբ, ապա թվում Հայկի և հաջորդների, Արշակունի թագավորների, Մարզպանության շրջանի իշխանների, Բագրատունի թագավորների, Կիլիկիայի հայ իշխանների և թագավորների հաջորդական կարգը։ Բնագրի նույնիսկ պատմական մասում ժամանակագրական տվյալները հազվադեպ են. հեղինակն ընդհանուր առմամբ բավարարվել է միայն իշխանների կամ թագավորների կառավարման տարիների ընդհանուր քանակը նշելով։ Բնագիրն հասցնում է մինչև 1351 թվականը[2]։ Հենց այս թվին էլ, ըստ երևույթին, կազմվել է այս բնագիրը։

Ներածականում իր օգտագործած սկզբնաղբյուրների մասին հեղինակը հանվանե հիշում է Եվսեբեոս Կեսարացուն և Մովսես Խորենացուն, որպես «ստուգաբան» մատենագիրներ, ինչպես ինքն է գրում, թեև «բազումք ընդ այլո բազում ինչ պատմեցին», բայց նա դրանց չի հավանում։ Հին շրջանին վերաբերող տեղեկությունները հեղինակը վերցրել է այս երկուսից, Ճացածների մասին, փաստեր չունենալու պատճառով, հաստատ բան չենք կարող ասել։

Հրատարակության համար հիմք ընդունեցինք № 2037 (Ա) բնագիրը, իսկ Ճացածների տարբերթերցվածները տվեցինք տողատակ։

---

[1] *Տես վերևում, էջ 173։*

[2] *Տեղին է նշել, որ հեթում Բ-ի տարեգրության Ն. Պալիենցի ընդօրինակության բնագիրը ևս շարունակվել է մինչև 1351 թիվը։ տե՛ս Մժ, 1, էջ 89։*

VI

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՔ ՀԱՅՈՑ[1]

131 ա

Արդ՝ վասն զի գիրքս առաջակա[2] գաւազանաց կամ ժամանակագրաց կոչեալ մինչև ցայս վայր ի գրոյ լատին ի հայ թարգմանեցաւ ինև փցուն Ներսէսիւ Գալիանցի կոչեալ ի Կիլիկոյ գաւառէն։

Գարտ վարկա վերջոյ ինքնակալութեանն Հոմայեցոցն և տէրութեանն Լատինացոցն զիշխողութենէն և զթագաւորութենէն Հայոց համառօտաբար շարադրել, նայև զհայրապետացն իսկ յիւրում տեղին, եթէ որպէս սկսան և զորն որք փոխանորդեցին և զանուանն և զժամանակն ևս զորքանութիւն աւուրց բացայայտել ըստ կարի, ըստ ուխտադրութեան իմոյ ի նախերգան գրոցս մինչև առ մեզ զպատմութիւնն հասուցանելով։ Եւ քանզի բազումք ընդ այլս բազում ինչ պատմեցին, իսկ մեք առցուք ի ձեռն գրել ի ստուդարան մատենիցն Եւսեբեայ ժամանակագրի և Մովսէսի Հայոցս վիպակագրի։

Արդ՝ ոմանք դնեն զթագաւորան Հայոց ի սեռէն Քամայ գոլ իջեալ վասն իշխողութեանն Բէլա և զկնի Նինոսի և Շամիրամա կնոջն նորա և այնպէս մի զմի փոխանորդեալ բերին մինչ ի տէրութիւնն Վաղարշակայ։ Այլ ես ոչ առնում յանձն զայս, քանզի թէպէտ և թագաւորութեամբն փոխանորդեցին զմիմեանս, սակայն ոչ սեռեաւ, նայև ոչ տեղօք, այլ յայլևայայլ տեղիս և յայլոյ ցեղէ իշխէին և թագաւորէին Հայոց և Պարսից, որք և Մարք ևս, որք են գրդերն ընդ յերկար տիրեցին Հայոց, նայև ամենայն Ասիոյ։ Եւ են սոքա յիրաւի ի ցեղէն Քամայ, յորմէ ցեղէ և Բէլ իսկ, որ է Ներբօվթ։ Սայ շինեաց զՈւռհայ, զոր յետո քակեաց Սենեքարիմ և զՍեվևկիայ շինեաց, որ թագաւորեաց սոյն Բէլս[3]

---

1 Г իշխանութիւն, 1-ին տողը D չիմ։ 2 ГD առաջակայ, Б ժամագրաց։ 4 В ինև չիմ, Ներսէսիւ, ГD Կիլիկիոյ։ 6 ВГD վարկայ, БD ինքնակալութեան, ГD Հռոմայեցուցն։ 7 Г լագինացուցն։ 8 Г նա և։ 9 D և թէ փխ. եթէ, ВГD և որք զորն։ 10 ВГD աւուրցն։ 11 Б կարզի փխ. կարի։ 12 Г հասուցանելով զպատմութիւնն։ 13 Б այլոյ, ВГD այլ ընդ այլոյ։ 14 Г ըստուդարան, Б եւսև փխ Եւսեբեայ, В Եւսեբեա, D ժամանակագրին։ 15 ВГD Մովսէսի։ 16 ВГ զթագաւորն։ 17 ББВГD Բէլայ, ГD Շամիրամայ կնոջ։ 18 ВГD բերեն։ 19 Б Վաղարշակա։ 21 ББD նահ, Г և փխ. նայե, ВD տեղեօք, Г տեղիւք, В այլոց։ 22 ВD որ, Г որև։ 23 Г էին փխ. են, ВГ երկար։ 24 ВD սոքայ։ 25 ББD սա, ВВГD յետոյ։ 26 В Սենէքէրիմ, ГD Սեննեքերիմ, Б զՍեվևկիա, В զՍեդեկիայ փխ զՍեվևկիայ, Г զՍէլեֆկրիա, D Սեվևկիայ, В որ չիմ, БГ Բէլս։

ամենայն Ասիոյ, բաց ի Հնդկաց, ամս ԽԲ (62)։ Եւ յետ Բէլայ՝
Նինոս ամս ԾԲ (52). սայ զՆինուէ շինեաց։ Ի սորին Նինոսի
ԽԴ (44) ամին Թարայ զԱբրահամ ծնանի։ Շամիրամ կինն Նի-
նոսի ամս ԽԲ (42) ե այլք հետեւաբար։ Իսկ մեք ի խոստացեալն
5 մեր կարդ շարագրութեանցն դարձցուք պայազատութեամբ իջու-
ցանել զցեղն և զիշխանութիւնն Հայոց յուզեղ գծէն և ոչ ի խո-
տորնակի ուղէշնոյ։ Արդ՝ ասեմ զազգն և զիշխանսն Հայոց եղ-
եալ և իջեալ ի ցեղէն և որդոցն Ցարեթի կրսերս որդոյն Նոյի,
զոր ցուցանեմք այսպէս ըստ աստուածային գրոց ևս՝ Արեթ կրսեր
10 որդին Նոյի ծնանէր զԳամեր, Գամեր՝ զԹիրաս, Թիրաս՝ զԹոր-
գոմ, Թորգոմ ծնանի զՀայկն։

Ա Այս Հայկս մի է ի հսկայիցն, որք խորհեցան զանբարիշտ
խորհուրդն աշտարակայշինութեանն։ Իսկ յետ ըլանելոյ աշտարա-
կին և անլուր բարբառոյն միմեանց խրոխտանօք ի վերայ միմ-
15 եանց տիրել կամելօվ, որով ի մէջ այլոցն Բէլ բռնանայր տիրել
Բ կամելով երկրի։ Իսկ Հայկն առեալ զորդի իւր զԱրամանեակ, զոր
ծնեալն էր ի Բաբելոն, ընդ այլս Ց (300) ոգոց ի նայ յարելոց,
ախիւ և կահիւ, չուեալ գա ի լեառնոտն Այրարատ, շինէ անդ տուն
և տայ զայն Արամանեկի, որդոյն իւրոյ և ինքն գնայ ընդ յարև-
20 մուտս հիւսիսի բնակէ և անուանէ զայն Հարք։

Իսկ Բէլայ տիրեալ ամենեցունց կոչէ և զՀայկն ի Բաբելոն,
զոր ոչ առ յանձն գնալ։ Գայ ի վերայ նորա խրոխտանօք և Հայկն
նետով հարեալ զԲէլ սպանանէ։ Յետ որո կացեալ Հայկայ ամաց
ոչ սակաւուց մեռանէր, յանձնեալ զախն, այսինքն է զպարոնու-
25 թիւնն Արամանեկայ։

Գ Արամանեակ, որդի Հայկայ, ծնանի զԱրմայիս և Թողու զեր-
կու եղբայրս իւր ի Հարք՝ զՄոս, յորմէ ազգն Մոսխոռունեաց և
զՄանաւազ, յորմէ Մանաւազեանքն և Բզնունեանքն և Գնու-
նիքն անուանին։ Եւ ելեալ ինքն գնացեալ բնակէ ի լեառնակողմն,
30 զոր և կոչէ զայն Արագած և ապրեալ անդ ոչ սակաւ մեռանի։
Գ Արմայիս, որդի Արամանեկայ ծնանի զԱմասիայ։ Ամասիայ
Ե ծնանի զԳեղամ ընդ յայլ Բ (2) որդոց։

Գեղամ, որդի Ամասիա, շինեաց բազում տեղիս. որ և շինէ 131 բ
զԳեղաքունիս և զծօվն ևս կոչէ յիւր անունն։

---

1 ԲԳ Բէլա։ 2 ԲԲ սա, Գ շինեաց զՆինուէ։ 1–2 D ու յետ Բէլայ Նինոս սա զՆինուէ շինեաց ամս ԾԲ եկաց։ 3 Բ Թարա, ԲԳD կին։ 4 ԲԳD այլքն, Գ ի չիմ, D զխոստացեալն։ 6 Բ ի ցեղն, Գ յուզիզ։ ԲԳ ի չիմ։ 7 Բ զազգն, ԲԳD զազգս, Գ իշխանս։ 8 BD յորդոցն, Գ յորդուցն Արեթի կրսեր, Բ կրսերոյ, D կրրսերոյ։ 9 ԲԵ կրսեր։ 10 Գ որդի։ 12 ԲԳD հսկայիցն, Բ մի էր հսկայիցն։ 13 ԳD խորհուրդ, Բ աշտարա|կայշինութեանն։ 14 Բ միմեանս, Բ խրոխտալով։ 15 ԲԳD որ և ի մէջ։ 16 Գ զորդին, D զԱրմանեակ։ 17 Գ ծնեալ, D Գձ, BBD նա։ 18 ԳD գայ, ԲԳD Այրարատոյ։ 19 BBD տա, ԲԳD Արմանեկի, BD որդոյ, Գ որդւոյ, ԲBD զնա։ 19-20 ԲԳD արևմուտս հիւսիսի։ 21 Բ Բէլա, Բ կոչեալ, և չիմ, զՀայկ։ 22 BD գա։ 23 ԲԳD որոյ, Գ կեցեալ, D ամաց չիմ։ 24 ԵԳD այս փխ. այսինքն։ 24 Բ զտէրութիւնն փխ. զպարոնութիւնն, 25 ԲԳ Արմանեկայ։ 26 ԲԳ Արմանեակ, Գ Հայկա, զԲ փխ. զերկու։ 27 Գ եղբարն, D եղբարս։ 29 D և ելեալ չիմ, Բ գնացեալ չիմ, Գ լեառնակողմ։ 30 Բ զոր չիմ։ 31 ԲԳD Արմանեկայ, Գ զԱմասիա, Ամասիա։ 32 ԲԲԳD այլ։ 33 ԲԳD Ամասիայ, D շինէ փխ. շինեաց, Բ շէն փխ. շինէ։ 34 Բ և կոչէ, ԳD անուն։

[Զ] Գեղամ ծնանի զՀարմայի և զՍիսակ և սահմանէ նմա կէտ
երկրի ի ծովէն ընդ արևելս կոյս, ընդ որ անցանէ Երասխ գետ,
ընդ դաշտն կոչեալ Քաղավաղ և անուանէ զայն երկիրն Սիւնիս
և այլն։

5 Է Հարմայ, որդի Գեղամայ, ծնանի զԱրամ և յետ ամաց մե-
ռանի։ Արամ, որդի Հարմայի, բազում գործ քաջութեան ցուցեալ
ընդարձակէ զաշխարհն իւր ընդ Դ (4) կողմանցն, յորոյ անունն
ամենայն ազգ և լեզուք զմեզ և զաշխարհն մեր Արամէնի և Արմէնք
կոչեն։ Եւ Արմենիկ ըմբռնէ զբռնաւոր ոմն Մադէս կոչեցեալ
10 և կախէ զդարսոյէն։ Եւ երկրորդ իւր կոչեաց զսա Նինոս։ Տայ և
համարձակութիւն և հրաման վարսակալ ածել մարգարտեայ։ Զայլ
ոմն հզօր և բռնաւոր Գայապիս անուն ի մէջ երկրաց հալածական
առնէ ի կղզի ինչ յԱսիա։ Եւ ի տեղի նորա Թողու զմշակ իւր,
յազգէ իւրմէ հայ, որ շինեաց զՄայժաք, որ յետո կոչեցաւ Կեսա-
15 ռիա։ Հրամայէ անդ և լեզու հայկական ուսանիլ։ Սա ծնաւ զԱրա։
Ը Արայ Գեղեցիկն որդի Արամայ։ Սայ պատուի ի Նինոսէ, որպէս
և հայրն իւր, իսկ յետ մահուանն Նինոսի, զոայլն Շամիրամ, յետ
չհնազանդելոյ նորա կամացն իւր, զի ուզէր քունել զինքն։ Ելանէ
պատերազմաւ ի վերայ Արայի ընդ բոամբ ածել զնա, որ սպանաւ
20 անզէն Արա, ի խառնիլն պատերազմին։ Որ և յետո Շամիրամն
շինէ զամուրն, որ կոչի այժմ Վան։ Եւ զորդին Արայի Կարդոս
առեալ, վասն սիրոյ հօրն, Արայ անուն եդ։ Եւ ապայ ինքն հալածի
ի Զրայեշտէ մոգէ, որ էր նահապետ Մարաց, զոր ի դալն իւր
Շամիրամ ամի ամի ի Հայս կողմնապետ Թողոյր դԶրայդաշտն
25 կողմանցն Ասորոց։ Յայսմ պատերազմիս մեռանէր Արայ, որդին
Թ Արայի։ Իսկ Շամիրամ փախստական լեալ հալածի և սատակի ի
Զամբասեայ որդոյ իւրոյ, որ է Նինուաս։

Արայեանն Արայի որդի Անուշաւանն։ Այս Անուշաւանս
հարուստ և հանճարեղ յիր և ի բան։ Սայ տուայտեալ շատ ար-
30 համարհանս կրէ ի Զամբասեայ և օգնականութեամբ բարեկամացն
շահի զմասն ինչ յաշխարհէն Հայոց, յետոյ ողջոյն իսկ։ Իսկ ի
սմանէ յառաջ ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմութեան արանց
բռնակալաց տիրեցին աշխարհին Հայոց և ոչ ըստ ազգաց ասեմ,
զի չէին հայեր, այլ զի ուղղակի ժառանգութեամբ ի հօրէ յորդի
35 ոչ անցանէր իշխանութիւնն։ Եւ անուանք նոցա այսպէս՝ Գարեթ,

---

1 Բ զՀարմայիայ։ 3 Դ զայ[ն]։ 5 Գ Հարմա։ 7 Բ Բ փխ. Դ, ԲԳԴ կողմանց, Գ յորոց։ 8 ԳԴ ազգք։ 9 Դ զզլխաւոր փխ. զբռնաւոր, կոչեալ։ 10 Դ զպարանոցեն փխ. զպարսպէն, երկրորդ որդի իւր, ԲԲԴ սա։ 11 ԲԳ մարգարտեա։ 12 Գ Գապայիս. Բ Գ երկրեաց։ 13 Բ յԱսիայ։ 14 Գ ոՄաժաք, Դ զՄայժակք, ԲԳԴ յետոյ, Բ կեսարիա։ 15 ԲԲԴ ուսանել, Գ սայ, ԲԲԳԴ զԱրայ։ 16 ԲԲԳ Արա, ԲԲԴ սա։ 18 ԲԲԳԴ չհնազանդելոյ։ Դ զնա փխ. զինքն։ 20 ԳԴ Արայ Բ պատերազմի, ԲԳԴ յետոյ։ 21 ԲԳԴ Արայի, Գ Հարդոս։ 22 ԲԲԳԴ սիրոյ։ Բ Արա։ 24 Գ Շամիրամի, ամի ամի չիք, Բ զԶրաշտն, ԳԴ զԶրադաշտն։ 25 Գ Ասորւոց, ԲԲ Արա, Բ որդի։ 26 ԲԳԴ հալածի և չիք, Բ և չիք։ 27 ԲԲ Զամբասեա որդոյ իւրոյ, Գ Զամբասեա-որդւոյ իւրոյ, Դ որդոյն իւրոյ։ 28 Բ Ար[ա]յի։ 29 Բ յերև ի բան փխ. յիր և ի բան, ԲԴ սա։ 31 Բ յաշխարհէս, յետո։ 32 Բ ըստ (յառաջադիմութեան) չիք, Դ յառաջադիմութեանց։ 33 ԲԳ յաշխարհին։ 34 ԳԴ ի չիք։ 35 ԲԳ այս փխ. այսպէս, Բ Զարեթ փխ. Գարեթ։

Արբոկ, Զաւան, Փառնակ, Սուր։ Առ սովաւ Յեսու Նաւեայ զօրա-
վարեաց։ Սրդ՝ ի սատակելն Յեսուայ զՔանանացիսն անցին փա-
խստական Յաղոաս Նաւելով ի Թարսիս։ Եւ յայս յայտն[ի] գրոշ-
մարն, որ յարձանին Ափրեկեցոց աշխարհին գրեալ կան այսպէս.
5 զի Յեսուայ դողոյ փախուցեալ եմք նախարարք Քանանացոց և
եկաք ընակել աստ, յորոց մի և քանի դաս պատուականագոյնն
մեր ի Հայս։ Զայս և ստուգեալ գտաք զազգն Դնթունեացն ի
նոյն Քանանո դասէն յառաջ դալ, զոր և բարք ազգին յայտնեն
Քանանայիս գոլ։ Յետ սուրա Զաւանակ, Վաշտակ, Հայկակ։
10 Զհայկակ, ասեն, առ Բէլիքոսիւ եղեալ և անրոխ արարեալ ան-
խորհրդարար մեռանի. Անրակ, Առնակ, Շաւարշ, Նորայր, Վստամ,
Կար, Դոակ, Հրանդ, Ընձակ, Դլակ, Հօրայ, Զարմայր։ Սայ օգնա-
կան Գոիամու ի Տաւտանայ, առաքեալ ընդ Եթոպացի զօրացն և
մեռանի ի քաչանցն Ելենացոց, Դրօացիքն են կարծեմ։ Գերճ,
15 սայ էր յաւուրս Դաւթի արքայի Իսրաեղի։ Արբուն, Բազուկ, Հոյ,
Յուսակ, Կապակ, Սկայորդի, Գարոյր։ Այս Գարոյրս, որդի Սկայոր-
դոյն Հայկազնի, օգն<ան>տկան լեալ Վարբակա Մարի, թուի թէ
Գարսիկն է, բառնան զթագաւորութիւնն ի Սարդանեայպալլեայ։
Ա Եւ թաղ եղեալ սմայ Վարբակ լեալ առաջին թագաւոր || Հայոց և 132ա
20 առաջին պսակաւոր ի Հայկազնեաց։

Հրաչեայ որդի Գարոյրայ. սայ Հրաչեայ կոչի վասն առաւել
րոցակնաղոյն և պայծառ երես լինելոյն։ Առ սովաւ գերեաց զՆերու-
սաղէմ Նաբոգոդոնոսոր, որ և սայ զմի ի գերելոց գլխաւորացն
Հրէից խնդրեաց ի Նաբագոդոնոսորա անուն Շարբաթ և բնակե-
25 ցոյց առ ինքեան մեծաւ պատուով, յորմէ յառաջ եկին ազգն
Բագրատունեացն, ե Սմպատն անուն է Շամբաթ։

Իսկ յետ Հրաչեայ պայազատէ զթագն Փառնաւազ, Գաճոյճ,
Կոռնակ, Փաւոս, Հակակ, Երուանդ, Տիգրան. Այս Տիգրանս առա-
ւել զօրաւոր լեալ ամենայն նախարարացն իւրոց, զորոյ զառա-
30 ւել գովութիւնն ուսցիս ի պատմութենէ մեծին Մովսէսի պատմա-
գրի։ Տիգրանս Թ (9)-երորդ գոյ ի Գարոյրա առաջին թագաւորէ
Հայոց։ Առ սայ եկին որդիքն Սենեքարիմա Ադրիմելէք և Սանա-

---

1 D Զառան փխ. Զաւան, Փառակ։ ՎԵ Նաւեա։ 2 Գ Յեսուա, Գ փախբսական։ 3 ՎD Յաղբոաս, Ի Թարսիսէ, ԵՎԳD այս։ 4 Ի Ափրիկացոց, Գ Ափրիկացւոց, D Յափրիկեցոց։ 5 Ի ի չիմ, Գ իսկ փխ. ի, Գ Քանանացւոց։ 6 Գ բնակիլ, D պատուականագոյն։ 7 Ի ի (հայս) չիմ։ 8 ԵՎԳD Քանանայ։ 9 ԵՎԳD սուրայ։ 10 ԳD ամբոխ։ 11 ՎD Վս[ա]մ։ 12 D Արանտ փխ. հրանդ, ԵՎD սա։ 13 Ե Տաւտանա, ՎD Եթովպացի։ 14 Գ Էլենացւոց, ՎԳD Էլենացիք Դրօացիքն են կարծեմ։ 15 ԵՎD սա, D Արբգան փխ. Արբուն։ 16 Ի Կայպակ, ՎԳ Սկաորդի, D և [Ս]կաորդի, ՎD Գարուրս, ՎԳ Սկաորդոյն, D Հսկայորդոյն. 17 ՎԳ Գարսիկ է թուի, D Վարբակ Գարսիկ է թուի Մարի։ 18 Ի Սարդանայպալլեա, ԳD Սարդանայպալլեայ։ 19 ՎԳD սմա, Ի և առաջին չիմ, ԳD առաջին թագաւոր հայոց և չիմ։ 20 Ե հայկազնեայ, D հայկազնին։ 21 ՎԷ Հրաչեա, Գ հռաչեա, D հրաչէս, Ի Գարուրեա, ՎԳ Գարոյրա Ի Գարուրեա սա հրաչեա, Ե սա հրաչեա։ 22 Ի րոցագոյն։ 23 ԵՎD սա։ 24 ԳD Նաբուգոդոնոսորայ։ 25 Ե առաջ։ 26 Գ Բագրատունեաց, ՎD Սմբատ, Գ Սբմպատգ, Ի Շամրաթն։ 27 ՎD Հրաչեա, Գ հռաչեա, Ի Գայճոյճ։ 28 Ի Կուռնակ։ 29 Ե ամենայն չիմ։ 30 Ի գոռոզութիւնն փխ. գովութիւնն, ՎԳ պատմութենէն, ՎD Մովսէսի։ 31 ՎD ինն-րդ, Գարոյրայ։ 32 ԵՎD սա, Ե Սենեքտրիմայ, Ի Սէնէքարիմայ, ԳD Սենեքերիմայ, ՎD Ադրամելէք։

տար. և ընակեցոյց զՍանասար առ Ասորեստան կողմամբն, որ աճեցեալ լցին զՍիմն լեառն. և իմաստնագոյնքն նոցա վասն մտերմութիւն ցուցանելս կոչեցան ըղեաշխք. իսկ յԱդրամու ազանէն՝ Արծրունիք և Գնունիք։ Իսկ ի Գասրամայ թոռնէ Հա-
5 կակայ լեալ Անդեղտուն։ Յետ սպանանելս նորա զԱշտանակ, որ թարգմանի վիշապ։ Զկին նորա դառաջին զԱնոյշ ամենայն դարմիւքն կացուցանէ առ թիկունս Մասեաց ոտին, որ է Տանպատ մինչև զ[Գ]ողթն, յորոց մին Վրանշունիք և Աժդանականն։ Սակայն որդիք Տիգրանայ լինին՝ Բար, Տիրան, Վահագն, յորմէ Վահունիք։
10 Ասաւան, յորմէ Առաւենեանք. յԱռաւենայ՝ Ներսէհ և ի Ներսէհէ՝ Զարեհ, ի Զարեհէ՝ Արմոզ, յԱրմոզայ՝ Բագամ, ի Բագամա՝ Վան, ի Վանայ՝ Վահէ։ Սայ ընդվզեալ մեռանի յԱղէքսանդրէ Մակեդոնացոյ։ Յայս վայր տէրութիւնն Հայոց դադարէ։

Յայմհետէ մինչև ցթագաւորելն Վաղարշակա ի Հայս ոչ
15 ինչ ստուգիւ ունիմք ասել, քանզի շփոթեալ, արք զարամք ելեալք։ Եւ վասն այնորիկ եղև դիւրաւ մուտ ի Հայս Արշակա Գարթեի, որ թագաւորեցոյց Հայոց զՎաղարշակ եղբայրն իւր[6]։ Բայց լինին ի սպանմանէն Բէլայ մինչև ցՎաղարշակ ամք ՌՁԾ (1950) կամ ՌՁԽԲ (1942)։ Յետ բառնալոյ տէրութեանն Հայկազ-
20 եանց յԱղէքսանդրէ, մեռանի Աղէքսանդրոս, որ թագաւորեաց ամս ԲԺ (12) և ամիս Զ (6)[6], որ և դարձեալ յարմատս սկսանիմք։

Արդ՝ վասն զի զԲաբելացոցն և զՄարացն, որք են Քրթաստանեայք և զԼիդիացոցն, Կիւրոս դարձեալ զիշխանութիւնն յորս
25 և էին Հայոցն ընդ Մարացն։ Եւ ինքն Կիւրոս միայնեծան տիրեաց այսոցիկ ի թագաւորեաց ամս Լ (30)։ Եւ ի Կիւրոսէ մի զհետ միս եղեն ի Բարելոն ունելով զերիս վերոյիշեալ թագաւորութիւնսն կացին թագաւորք ԺԴ (14) դամս ՄԼ (230). յորոց վերջինն էր Դարեհ Արշամայ[7]։

30 Արդ՝ յառաջին ամին թագաւորելոյն սոյն Դարեհիս եկ յերկրի Ալէքսանդր Մակեդոնացի ՃԻԱ (111) օլիմպիա թին[8]։ Իսկ եթէ զինչ է օլիմպիաթն ասասցուք՝ օլիմպիաթն է անուն թւականի և թուաբերութեան, զոր Սարդիոոս առաջին թագաւոր Լիդացոց, ի յերկրորդ ամին իւրոյ թագաւորելոյն, կարգեաց և եղ ի Փիդոս

---

3 ՎԳD ցուցանելոյ, D ըդեա[շ]խք։ 4 D Հայկակ։ 5 B Անդեզտանոյ, D Անդեզտունն, ԲՎԳD սպանանելոյ, B զԱշդահ[ակ]։ 6 ԲԲ զկինի փխ. զկին, B զԱնոյ[շ], Գ զԱյնոյշ։ 8 D Աժդահականն։ 0 B Վահանդն։ 10 B Առաւանք, յԱռաւենա, DյԱռաւենոյ։ 11 Գ Արմոզայ, D Բահամ, B Բագամայ, D Բահամայ։ 12 Գ Վանա, ԲՎԳD սա, D յԱղեկսանդր, Գ Մակեդոնացւոյ։ 14 ՎԳ Վաղարշակայ, D ցԹագաւորութիւնն Վաղարշակայ։ 15 Գ ստուգիւ չիք։ 10 BD դիւրևաւ, Արշակայ։ 18 Գ Բէլա, ԲԲD ՌԹՃԾ։ 19 BD ՌԹՃԽԲ, D Հայկազնեաց։ 21 B ԲԺ-ն, ԳD ԲԺ-ան, ՎԳD յարմատոյ։ 23 B զԲէլացոցն, Գ զԲաբելացւոցն, ՎԳD որ փխ. որք։ 24 Գ զԼիդիացոցն, D զԼիդացոցն։ 25 D Տիւրոս փխ. Կիւրոս, ԲՎԳD միահեծան։ 20 Գ զամ, ՎԳD միոյ։ 27 B վերասաղեալ փխ. վերոյիշեալ, Գ վերյիշեալ, Բ պարոնութիւնսն փխ. թագաւորութիւնսն։ 27/23 տողը D ի Բաբելոն... կոչին չիք։ 23 BD ԲՃԼ։ 29 Գ վերջն։ 30 Գ առաջին, Բ երկրի, D յերկրի չիք։ 31 BD ոլոմպիաթին, Գ օլոմպիադին։ 33 BD թագաւորն, B Լիւդացոց, Գ Լիւդացւոց։ 34 Գ ի Փիդոս չիք, BD իւրոյ։

Պրաքսիւոն ի Դիմոնայ, որ է դպիր կամ թխտապան, թւական եդ
և ամենայն ժամանակագրութիւնն Յունաց անդի սկսանի թուել,
քանդի մինչև ի յայս իւրաքանչիւր ոք, որպէս և յօժարէր թա-
գաւոր հրաման տայր թագաւոր դրել[2]։ Եւ ասացեալն Ալէքսանդր
5 Մակեդոնացի սկսաւ ի ՃԺԱ (111) օլոմպիադական թւարերու-
թեանն և է (7) ամի իւր էառ զԲաբելոն և սպան զԴարեհ[10], որ
թագաւոր էր Բաբելոնի, Մարաց և Լիդէացոցն ևս և Պարթևացն
ընդ Հայոց, թագաւորեաց ամս ԺԲ (12) ամիսս Զ (6)։ Իսկ զկնի
մահուանն Աղէքսանդրի իշխանութիւն նորա ի Դ (4) բաժանի,
10 որ յայլում տեղոջ պատմի։ Արդ՝ մի ի չորիցն Սելևկոս, որ զկնի
Ալէքսանդրի կալաւ զԲաբելոն, որ ընդ այլոց աղգաց և զՊարթևս
հնազանդեցոյց մեծաւ պատերազմաւ և վասն այնորիկ կոչեցաւ
Նիկանովր. սայ թագաւորեաց ամս ԼԱ (31), զկնի Անդիոքոս
Սովտէր, որդի սորա ամս ԺԹ (19)։ Անդիոքոս Թէոս ամս ԺԷ
15 (17)[11]։ Ի սորին ԺԱ (11) ամին ¶ ապստամբեն Պարթևք ի Մակե- 132 բ
դոնացոցն. որոց թագաւորեաց Արշակ քաջ, նախ ի զաւակէն Աբ-
րահամու ի Քետուրական ծնընդոց, ի քաղաքին՝ որ կոչի Բահլ,
ամս ԼԱ (31)։ Եւ ապայ որդին նորա Արտաշէս ամս ԽԶ (46)։ Եւ
ապայ Արշակ մեծ ամս ԾԴ (53)[12]. Այս Արշակ մեծ թագաւորե-
20 ցոյց զեղբայրն իւր զՎաղարշակ աշխարհին Հայոց ի ԻԷ (27)
ամին Պտղոմիդեայ և Դ (4) ամին Էրգիտեայ թագաւորացն Եգիպ-
տոսի և օլոմպիադին ՃԿԷ (167), տալով սմայ սահմանս զհիւ-
սիւսի և զարեմուտս աշխարհին Հայոց։ Վաղարշակս այս էր այր
քաջ և խոհեմ. և սահմանեաց կարգս և դասապետութիւնս կեն-
25 ցաղականս որ և նախարարս և նահապետութիւնս ի պալատն
արքունի. այլ և յաշխարհին Հայոց կարգեաց նայև այլ բաղում
իրս բարեձևութիւնս յօրինուածս տանց, աղգաց, քաղաքաց, շի-
նից, գաս[տ]ակերտաց, զօրաց, կողմնակալաց և այլոց այսպիսի
պիտոյից. յօրինուածոց և սահմանագրութեանց, ընդ որս սակաւ-
30 ուք անցցուք բացայ յայտմամբ[13]։

Արդ՝ նախ սկսանի ի գլխոյ իւրմէ և զԲագարատ, որ է ի Հրէիցն, առնէր թագադիր ասպարապետ և տայր նմա աստիճան դնել թագ ի գլուխ թագաւորին։ Եւ սգեցուցանող իւր զձեռէս ի

---

1 Գ Պրաքսիւոն...դպիր չիք, ԲD ի Դիմոնայ չիք, Ե կամ իշխան թղթապան։ 2 Ե սկսան, Գ սկսան թուել։ 3 D ի չիք, ցայս, Գ ոք չիք։ 4 Ե թուական փխ. թագաւոր։ 5 D թվարերութեամբն։ 6 ԳD և ի է, D զԲաբիլոն։ 6,7 D որ էր թագաւոր։ 7 Գ Բաբիլոնի, Լիդէացոցն, Ե ևս չիք, Գ ևս ընդ փխ. և։ և։ 8 Ե և ամիսս։ 9 D մահուան, ԲԳ իշխանութիւնն, Ե չորս փխ. Դ։ 10 ԳD տեղւոջ։ 11 Գ Ալէքսանդրի։ 12 Ե սաստիւ փխ. պատերազմաւ, D ուժով փխ. պատերազմաւ, Ե և (վասն) չիք։ 13 ԵԲD սա։ 14 Ե Սովտէրն, ԲD որդի չիք, ի սորա, Ե ԺԲ փխ ԺԹ։ 15 ԳD ապստամբին, D ի (Մակեդոնացոցն) չիք, Գ Մակեդոնացւոցն։ 16 ԳD նախ Արշակ քաջ, Գ յԱբրահամու։ 18 ԵԲԳD ապա, Ե որդիքն, ԳD որդի, Ե Արտաշէս փխ. Արտաշէս։ 19 ԵԲԳD ապա։ 20 ԳD զեղբայր, Գ յաշխարհին, Ե ԻԵ փխ. ԻԷ, D ԻԱ փխ. ԻԷ։ 21 Ե Պտղոմիդեա, ԲԳ Պաղոմիդեա, Ե Երգիտեա։ 22 Ե ՃԷ փխ, ՃԿԷ, D ՃԿ փխ. ՃԿԷ, ԵԲ սմա, D սմս փխ. սմայ, ԵԲԳ զհիւսիսի։ 23 Գ յաշխարհին։ 24 ԲD քաղաքական փխ. կենցաղականս։ 26 Ե ա[ղբու]նի, D աշխարհին, ԵԲD նաև։ 28 Ե իշխանաց փխ. զօրաց, D բաց կողմնակալաց։ 31 Ե Այլ փխ. Արդ, Գ է չիք։ 32 Ե առնէ, D տա, Գ նմայ։ 33 ԵԲԳ գգեցուցանող, D զձեռս։

զաւակացն Քոնանու և կոչէ զազգն Գնթունի, ոչ գիտեմ ոյր աղա-
գաւ ի քանի դայ։ Եւ թիկնապահ իւր ի զաւակացն Խոռայ Հայ-
կազնոյ զՄախխազ, որ և անուն զնախնականն պահէ Մաղխազու-
նիք։ Եւ զԴատ ի զաւակէ Գառնկայ, որ[դ]ի Գեզամայ ի վերայ
5 որսոց, որո որդի Վարաժ, յորմէ կոչին և Վարաժնունիք։ Եւ
զազգն Արծրունեաց, որ է արծիւ ունիս։ Եւ ոգնունիքն՝ դինի
ունիս, սոքա էին յոստոցն Աենէքարիմայ։ Եւ զՍպա[ն]դունիսն,
որ է թուր ունիս ի վերայ զինուցն. կացուցանէ և պահապանս
արքունի[14], զորս այժմ պահնորդեր կոչեն ի Կիլիկեայ. ի հին
10 զարմից թագաւորացն, որ բուն ոստ անուանին, որք և Վիրք և
այժմն սեփէծուլ կոչեն։

Եւ յարեալից կողմանէ զերկուս նահապետութիւնս զՍիսա-
կանն որ ի տանէն Կոդմեայ և զԱռան, ի նոյն զարմէ, կարգէ
անդ կողմնակալ ի նոյն Սիսական ծնընդոց։ Եւ աշխարհն նոցա
15 յանուն քաղցր բարբառոյն կոչի Ազուվանք և սոյնպիսիք բաղումք։
Իսկ ի չորրորդն կոչեցեալ Հայք հաստատէ զմեծ նահապետու-
թիւնն Ծոփաց, այլ և զնահապետութիւնն Ապայհունեաց և զՄա-
հաւաղեանն, և զԲզնունեացն։ Եւ զայր ոմն սրտեղ՝ անունն Սլաք,
թէ յազգէն Հայկեայ և թէ յառաջ քան զնայ կարգէ պահել զլեառն,
20 որ Սալք կոչի։ Եւ ի սոյն իրս զՄիանդական անդառնալի յորմէ՝
Մանդակունիք։ Բ սակաւուցս զայլ բազումն իմանալ բաւական է
խոհեմ լսօղաց, զորս կարգեալ կացոյց իրս թագաւորականս Վա-
ղարշակս ասացեալ ի թագաւորելն իւր ի Հայս[15]։

Ուր սկիզբն գտանես զանունն իւր առաջի դիրն այն թա-
25 գաւորք են, իսկ որ գտանես նախգրեալ՝ պարոն, այն ոք չեն թա-
գաւոր[16]։

Ա Եւ յետ այսպիսի բարեձեռութեանց և կարգաւորութեանց
Վաղարշակայ մեռանի ի Մծբին, թագաւորեալ ամս ԻԲ (22).

Բ Զկնի Արշակ, որդի նորա, ամս ԺԳ (13)։

---

1 B Քանանացոց։ 2 B թէ[կնա]պահ, Խոռա։ 3 B զմախ խարխորխնականն պահէ մաղխազունիք փխ. զՄախխազ...Մաղխազունիք, D [զմախ]խազ որ և անուն չիք, ի նա[խն]-ականն։ 4 B Գառնկա Արշամա, Գ Գառնկայ, D Գառնկայ չիք, B որդի Գեզամայ չիք, D որդի չիք, [Գեզ]ամայ։ 5 D Աորոց փխ. որսոց, ВГD որոյ, ВГD և կոչին, BD Վարաժունիք։ 5/6 B և վասն փխ. և զազգն։ 6 D զազգն չիք։ 7 ВГD սոքայ, Г յորդւոցն Սենեքերիմայ, D որդոցն, B Սէնէքէրիմայ, D զապազունիսն։ 8 D զինուց, B և չիք։ 9 D արքունիս զոր, Г Կիլիկեա, D ի հին չիք։ 10 D [զարմ]ից, ВГD որպէս փխ. որք, ВГD և (այժմն) չիք։ 11 БГD այժմ, D սեփ[էծուլ], BD կոչեն չիք։ 12 B երկուս, D և յարեալից... զՍիսականն չիք։ 13 14 B որ ի տանէ միւս և զԱռան ի նոյն զարմէ կարգէ անդ կողմնակալ փխ. որ ի տանէն...կարգէ անդ կողմնակալ, D [Կոդ]մեա, զԱռանա։ 14 Г Սիսակա, D Սիսակայ ծնընդոցն, յաշխարհն։ 15 B անուն, Б Ազուանք, D սոյնպէս՝ իք], BD բազումք չիք։ 16 D նահապետութիւն։ 17 D այլև չիք, Г Ապահունեաց։ 18 B զայլ փխ. զայր, D զայր չիք, զոմն, Б ստեղ փխ. սրտեղ։ 19 B հայկա, D հայկայ, ВВГD զնա, D պահել չիք։ 20 B զսոյն փխ. ի սոյն, ВГD զՄիանդական։ 21 B Մակեդունիք, D Ման[զակ]ունիք, ի չիք, սակաւուց, Г իսկ ի սակաւուցս, BD բազումս։ 22 B զոր։ 23 D այս փխ. ասացեալ, իւրում, Б իւր չիք։ 24 ВГ ի սկիզբն, Г յառաջի, B գրին, Б թագաւորին փխ. թագաւորք են։ 25 B նախագրեալ, Г այնոքին փխ. այն ոք, D պարոնայք փխ. պարոն այն ոք, B այն ոք չեն թագաւոր չիք, Б որք փխ. որ, նախագրեալ։ 28 B Վաղարշակա, D Վաղարշակ, D մեռաւ։ 29 Г որդին։

Գ Արտաշէս, որդի Արշակայ, ամս ԻԵ (25)։ Սայ յառաջադէմ եղեալ քան զամենեսեան, ոչ եղեալ երկրորդ Պարսից, այլ զՊարսից թագաւորն արարեալ իւր երկրորդ, որ և անհամար զօրաք դիմեաց յտրևմուտս ե զբազումս հնազանդեցոյց և մեռաւ յիւրայոցն։

Դ Տիգրան, որդի նորա, ամս ԼԳ (33)։ Սայ ոչ ինչ ընթաց ի հօրն քաջութեանն առնել արիութիւնս, բայց դարձեալ եղև երկրորդ Պարսից։ Առ սօվ[աւ] Վակոն ելուզակ, յորմէ լեառն Վակունիք։

Ե Արտաւազ որդի Տիգրանայ ամս Բ (2)։

Զ Արշամ որ և Արշամ, եղբայր Տիգրանա, ամս Ի (20)։ Առ սովաւ զառաջինն եղև Հայոց || հարկ ինչ տալ Հռոմայեցոցն։ 133ա.

Արդար որդի Արշամայ ամս ԼԸ (38)։ Ի սորա թագաւորութեանն երկրորդ ամին հարկին Հայք Հռոմայեցոցն ամենեքեան. զի որպէս ասէ Աւետարանագիրն ել հրաման յՕգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ յամենայն տիեզերս, որոյ աղագաւ և ի Հայս ևս եկին, յորում ամի Տէրն մեր և Աստուածն ծնաւ ի Բեղլահէմ։

Արդ՝ ի Վաղարշակայ, որ նախ ի վերջինս թագաւորեաց Հայոց մանաւանդ թէ առաջին իսկ մինչ ի Ցարդար և ի Քրիստոս հաւաքին ամք ՃԺԷ (117). և էր այն ամ Օգոստոսի կայսրութեանն ԽԲ (42) և Հէրոդէ ի այլազգոյ, որ Ցերուսաղէմ ամք ԼԲ (32) և Ալէքսանդր Մակեդոնայո ամք ԴՃԺԱ (311), իսկ օլիմպիադին ՃՂԴ (194)։ Աստ ոչ համաձայնին թուականութիւնքս պէսպէս։ Արդ՝ ի վերո ասացեալոցդ, ի յերկրորդ ամին Արգարու ծնաւ Քրիստոս։ Իսկ Արգար թագաւորեաց այլ ամս ԼԶ (36)։

Սանատրուկ ամս ԼԲ (32)[17],

Էրուանդ ամս Ի (20)

Արտաշէս ամս ԽԱ (41)։

Արտաւազ ամս Բ (2)։

Տիրան, որդի Արտաշէսի, ամս ԻԱ (21)։

Տիղրան, եղբայր սորա, ամս ԽԳ (43)։

Վաղարշ ամս Ի (20)։

Խօս[ր]օվ ամս ԽԸ (48)։ Յետ մահու սորա ոչ եղին թագաւոր ամս ԻԸ (28)։

Տրդատ ամս ԾԶ (56)։

Տիրան և Խօսրովի փոքրն ամս Ժ (10)։

---

1 Գ Արշակա, D Արշամայ փխ. Արշակայ, ԲԲD սա։ 2 D զամենեսին։ 3 Բ որ չիմ։ 4 ԲԳD յիւրայնոցն։ 6 ԲԲD սա, ԲԳ ընթաա, D ընթասի։ 7 D քաջութեան, Գ արութեանս։ 8 Գ յելուզակ, D յեղուզակ, Գ Վարկունիք։ 9 ԲԲ Տիգրանա։ 10 ԲԳD Տիզրանայ, Բ Տիւրանա փխ. Տիգրանայ։ 11 D Հռոմայեցւոցն։ 12 Բ ԼԱ փխ. ԼԸ, D թագաւորութեան։ 13 ԳDՀռոմայեցւոցն։ 14 Գ զի չիմ, D աւետարանն, Բ Օգոստոս։ 15 ԲԳD ամենայն, Ե որո։ 16 ԲԳD ի յորում, D յամի, Աստուած։ 17 Բ Բեթղեհէմ, Գ Բեղդահէմ, D Բեթլէհէմ։ 19 D մինչև։ 20 D այն ամք։ 21 ԲD Հերովդի, Գ Հերովդէի, այլազգոյ։ 22 Գ Ալեսանդր, D Ցաղեկսանդր, ԲD Մակեդոնացոյ Գ Մակեդոնացւոյ։ 23 Բ օլոմպիաթին, D ոլոմպիաթին։ 24 ԲԳD ի (յերկրորդ) չիմ, ԲD վերասացելոցդ, Գ վերասացեալս։ 30 Գ Արաաշիսի։ 33 ԲD սորայ։ 33 D մահուան, սորայ, թագաւորք։ 36-րդ տողը՝ ԳD չիմ։

Խոսրով, որդի Խոսրովու, ամս ԺԲ (12).
Տիրան ամս Լ (30)[18].
Արշակ ամս Է (7)[19].
Գայ ամս Դ (4)[20].
Վաղարշ և Վաղարշակ Բ (2) եղբայր՝ ամս Ե (5)[21].
Վռամշապուհ ամս ԺԹ (19)[22].
Խոսրով ամս մի[23].
Շապուհ ամս Զ (6).
Արտաշէս ամս Զ (6)[24]. Յետ սորայ անթագաւոր ամս ԺԳ (13).
Գարոն Վարդ մարզպանն ամս ԺԷ (17)[25]. Զկնի սորայ անտէրութիւն ամս Ե (5).
Գարոն Մանկոս ամս ԺԸ (18).
Գարոն Արշամ ամս Ե (5).
Գարոն Վահան ամս ԻԸ (28)[26].
Գարոն Վարդ ամս Դ (3). Յետ սորայ անիշխան ամս Դ (4).
Գարոն Դաւիթ ամս Լ (30)[27].
Գարոն Թէոդոս ամս ԻԵ (25)[28].
Գարոն Համազասպ ամս Է (7)[29].
Գարոն Մէժէժ ամս ԻԹ (29)[30]. Յետ սորայ անիշխան ամս ԼԷ (37).
Գարոն Ներսէհ ամս Բ (2)[31].
Գարոն Աշոտ ամս Դ (3)[32].
Գարոն Սմպատ ամս ԻԱ (21)[33]. Զկնի սորայ անիշխան ամս ԾԴ (54).
Դարձեալ թագաւորք.
Աշոտ ամս ԺԶ (16).
Սմպատ ամս ԻԶ (26).
Աշոտ, որդի սորայ, ամս ԺԶ (16).
Սմպատ, որդի Աշոտայ, ամս ԼԲ (32)[34].
Աշոտ, որդի Սմպատայ, ամս ԼԶ (36)[35].
Սմպատ ամս ԻԴ (24)[36]. Յետ սորայ անթագաւոր ամս Ե (5)[37].
Արաս, որդի Սմպատայ, ամս ԻԵ (25).
Աշոտ, որդի Արասայ, ամս ԻԶ (26).
Սմպատ Շահինշահն ամս ԺԳ (13).
Դաւիկ, եղբայր սորայ, ամս ԻԹ (29)[38].
Յովաննէս և Աշոտ եղբարք՝ ամս ԺԸ (18)[39].

---

1 Γ Տրդատայ փխ. Խոսրովու, D որդի Խոսրովու չիմ. 2 Γ ԺԳ փխ. Լ. 3 Γ Լ փխ. Է. 4 Γ Է փխ. Դ. 5 D եղբայրք. 6 տողը՝ D չիմ. 7 B ամ, ԲD Ա փխ. մի, Γ Ի փխ. մի. 10 Γ Վարդան փխ. Վարդ, BD մարզպան, Γ սորա. 10—11 տողը՝ զկնի սորայ անտէրութիւն ամս Ե B չիմ. 11 Γ անտէր. 12-րդ տողը B չիմ. 14—18 տողերը B չիմ. 15 Γ սորա. 19 Γ սորա 20 D Է փխ. ԼԷ. 23 D Ի փխ. ԻԱ, ΓD սորա. 24 D Ծ փխ. ԾԴ. 25 B դարձեալ չիմ. 27 B ԻԱ փխ. ԻԶ. D ԼԳ փխ. ԻԶ. 28 Γ սորա. 20 D Աշոտայ. 30 B Սմբատա. 31 ΓD սորա, Բ անիշխան փխ. անթագաւոր. 31-ի և 32-ի առանիոում Γ Աշոտ որդի Սմբատայ ամս Իե. 32 ΓD ԻԶ փխ. Իե. 32 – 33-ի առանիոում D Արաս որդի Սմբատայ ամս Իե. 33 Բ Ա՛բասա, Γ Իե փխ. ԻԶ, D Իէ փխ. ԻԶ. 33-րդ տողի փոխարեն B Աշօտ որդի Սմբատայ և եղբայր Աշօտայ ամս ԼԶ. 34 Γ Շահընշահն, D Շահնշահ. 35 D Սմբատայ փխ. սորայ. 36 B Յովանէս, Γ Յովհաննէս, D Յոհաննէս, B ԺԶ փխ. ԺԸ, D ԺԳ փխ. ԺԸ.

Գադիկ, որդի Աշոտոյ, ամս ԼԶ (36)[40]։

Պարոն Ռօբէն ազգական Գադկայ ամս Ի (20)[41]։ Իսկ յետ սորա փոխեցաւ թագաւորութիւնն կամ թէ տէրութիւնն Հայոց ի գաւառն Կիլիկոյ ի թուականութեանն Ալէքսանդրին ՌՆԹ (1409)[42] և Քրիստոսի մարդեղութեանն ՌՂԸ (1098)։ Իսկ Հայոց թուականութեանն ԵՃԽԷ (547)։

Պարոն Կոստանդին, որդի Ռօբէնի, ամս Ե (5)[43]։

Պարոն, Թորոս որդի Կոստանդևայ, ամս ԻԳ (23)[44]։

Լևոն, եղբայր Թորոսի, ամս ԺԵ (15)։ Յետ սորայ կայսրն Փէրփօժէն էառ զԿիլիկեայ և Ահմաա տաճիկ ամիրայ ոմն, որք և տիրեցին ամս Ա (1) և այլք ասեն լինել ամս ԺԱ (11)։

Պարոն Թորոս[45], որդի Լևոնի, ամս ԺԳ (13)։

Պարոն Ռօբէն, որդի սորա, ամս Ա (1)։

Պարոն Մլեհ, եղբայր Թորոսի, ամս Է (7)[46]։

Պարոն Ռօբէն, որդի Ստէփանէ, եղբօր Թորոսի, ամս ԻԲ (22)[47]։

Լևոն[48] Առաջին, եղբայր Ռօբէնին, ամս ԼԵ (35)[49]։

Ֆիլիպն փեսայ Լևոնի և որդի բրընձին Անդիոքու ամս Գ (3)։

Հէթում փեսա Լևոնի ի նոյն ախչիկն թագուհի Ֆիլիպին ամս ԽԵ (45)։

Լևոն, որդի սորայ, ամս ԺԸ (18)։

Պարոն Հէթում իւր որդին մեծն՝ ամս Ը (8)։

Սմպատն, եղբայր սորայ, ամս Բ (2)։

Կոստանդին, եղբայր Սմպատին, ամս Ա (1)։

Պարոն Հէթում, որ վերոյ, դարձեալ ամս Բ (2)։

Լևոն որդի Թորոսի, եղբօր սորա, ամս Գ (3)։

Օշին, հօրեղբայր Լևոնի, ամս ԺԳ (13)։

Լևոն որդի Օշնի[50] ամս ԻԱ (21)։

Պարոն Ջուան, հօրքւեր որդի Լևոնիս, պայլ կացեալ ամ մի։

Կիտ[51], եղբայր Ջուանիս, ամս Բ (2)։

---

1 D Աշօտայ, B Լ փխ. ԼԶ։ 2 BD Ռոբէն, Г Ռուբէն, D Գադիկայ։ 3 BD սորայ։ B կամ թէ չիմ։ 4 Կիւլիկիոյ, D Կիլիկիոյ, B ի թվականութեանցն Ալէկ[ս]անդրի ՌԳՃԹ, Г թվականութեանց Ալէքսանդրին ՌԳՃԹ, D թվականութեանցն Ալէքսանդրին ՌԳՃ։ 5 B ի թվին Քրիստոսի, Г և ի մարդեղութեանն Քրիստոսի։ 6 D հայոց թվական[ութեանն]։ 6 Г ՇԻԵ փխ. ԵՃԽԷ, BD ԵՃԽԷ չիմ։ 7 BBГD կոստանդին, Г կոստանդին որդին Ռուբէնի, D Ռուբէնի, B Ռօբա, Б որդի չիմ, B Ե չիմ։ 8 BГ կոստանդեա, D կոստանդէնի, BD Ի փխ. ԻԳ։ 9 Г Թորսի, B ԺԲ փխ. ԺԵ, Г սորա, D կայսր։ 10 Г զԿիլիկեա, B ամիրա, D ոմն ամիրայ։ 11 Г ամ, B մի փխ. Ա, D Ա չիմ, այլ, Г տասն և մէկ։ 13—14 տողերը Б չիմ։ 13 Г Ռուբէն, D Ռուբէն, B սորայ, Г սորա ամ մէկ։ 14 D մսեմ փխ. Մլեհ, Ե փխ. Է։ 15 BD Ռոբէն, B եղբայր Թորոսին, Г Ռուբէն, եղբօր Թորոսի չիմ, D յեղբօր։ 16 B Լէոն, D առաջին չիմ, Г Ռուբենի, B Ռօբէնին ամս Լե. այս Լևոն Առաջին ի Կիլիկիայ թագաւորեաց, D Ռուբենի առաջին թագաւոր Կիլիկիայ ամս Լե։ 17 B բրընձին Անդիոքու ամս Գ չիմ, D Ֆիլիպ, բրինձին։ 18 Б Հէթում փեսա Լևոնի չիմ, BD փեսայ, Г փեսա, D աղջկան թագուհոյն։ 20 ГD սորա։ 21 BГD մեծ։ 22 D Սմբատ, B Ը փխ. Ի։ 26-րդ տողի փոխարէն՝ Г կոստանդին եղբայր Լևոնի ամս ԺԳ։ 27 D սորա փխ. Օշնի, ԻԳ փխ. ԻԱ։ 27—28 արանքում՝ D կոստանդին ազգական Լէօնի ամս Է։ 28 D ձուան, Լէօնի. ամս Ա։ 29 BГ ամս Բ. զսա ընդ եղբօրն իւր և հայերն սպանին ՌՃԾԱ թվին, D ամս Բ զսա ընդ եղբօրն իւր սպանին հայք թվական հայոց ԵՃԷ և Քրիստոսի ՌԳՃԾԱ։

Կոստանդին, աղգական Լևոնի, կեայ այժմ և թագաւորէ ամս Է(7), որ է թուականին Հայոց Պ(800) և Քրիստոսին ՌՅԾԱ(1351),

---

1 Б գայ փխ. կեայ, В կեայ, Г կեայ այժմ և թագաւորէ չիմ. 1—2 տողի փոխարեն մեկ ուրիշն ավելացրել է՝ D Լեոն իբր թագաւոր կացեալ ԺԱ ամիս և բարձաւ թագաւորութիւն ի տանէն Կիլիկեցւոց։ 2 Г թուական, В Ը D փխ. Պ, Г Քրիստոսէ, В ՌԳՀԾԱ փխ. ՌՅԾԱ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում վերնագիրը գրված է կարմիր թանաքով։

2. Բնագրում մինչև այդտեղ գրված է նույնպես կարմիր թանաքով։ «Առաջակա» բառին բնագրում նախորդում է «առաջ» բառը, այն չվերցրինք։

3. Բնագրում «Բլէս» ձևով։

4. Տես և հմմտ. Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք I-ին, գլուխ Ե։

5. Այս ամբողջ տեղեկությունները տե՛ս նույն տեղում, գիրք I ին, գլ. Ժ—ԼԱ։

6. Տես Ե. Կեսարացու ժամանակագրությունը, մասն Բ, էջ 126։ Ըստ երևույթին Ն. Պալիենցն այստեղից է սկսել օգտագործել Ե. Կեսարացու վերոհիշյալ աշխատությունը։

7. Տես և հմմտ. Ե. Կեսարացի, Ժամանակագրություն, մասն Բ, էջ 113—126։

8. Տես նույն տեղում, մասն Բ, էջ 126։

9. Տես նույն տեղում, մասն Բ, էջ 98։ Ե. Կեսարացին այդ մասին գրում է. «Զայս Ողոմպիաս եդ Իփիտոս Գրաքիոնի Դիմոնեայ։ Եւ յայն ժամանակէ Թուի Ցունաց ժամանակագրութիւնն վաւերական. զի յաւաջ քան զայսոսիկ՝ իւրաքանչիւր ոք որպէս և յօժարէր՝ վճիռ տայր»։ Հույները առաջին օլիմպիադան հաշվում են 776 թ. (Ն. մ. թ.). յուրաքանչյուր օլիմպիադան ունի չորս տարի։

10. Տես նույն տեղում, մասն Բ, էջ 126։ Ալ. Մակեդոնացին Աքեմենյան Պարսկաստանի թագավոր Դարեհ III-ի բանակները ջախջախեց 331 թվի սեպտեմբերի 30-ի, Նինվեի ավերակներից ոչ հեռու, Դավկամելա փոքրիկ գյուղի մոտ տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում։

11. Սելևկյան թագավորների մասին այս տվյալները տես նույն տեղում, մասն Բ, էջ 128—130։ Մինչև այստեղ Ն. Պալիենցն օգտվել է Ե. Կեսարացու ժամանակագրությունից, իսկ այնուհետև գործյալ Մ. Խորենացուց։

12. Այս և շար. տես Մ. Խորենացի, գիրք II, գլ. Ա.։

13. Տե՛ս նույն տեղում, գիրք II, գլ. Գ։

14. Նախարարական տների կազմավորման ամբողջ պատմությունը տես նույն տեղում, գիրք II, գլ. Է։

15. Տես նույն տեղում, գիրք II, գլ. Ը։

16. Բնագրում այս ամբողջ հատվածը գրված է կարմիր թանաքով։

17. Տես նույն տեղում, գիրք II, գլ. Ը—ԿԱ։

18. Մ. Խորենացին Տիրանի թագավորության տարիները նշում է 11, գիրք III, գլ. ԺԷ։

19. Նախագաղափար օրինակում գուցե եղել է ԺԷ։ Արշակ Բ-ի թագավորության ժամանակի մասին տես ներքևում, էջ 468, 471, ծ.անոթ. 3։

20. Մ. Խորենացու մոտ Պապի թագավորությունը նշված է յոթ տարի, գիրք III, գլ. ԼԹ։

21. Այստեղ պակասում է Վարազդատի անունը, որը, ըստ Մ. Խորենացու, թագավորել է չորս տարի, գիրք III, գլ. Խ։

22. Ըստ Մ. Խորենացու 21 տարի, գիրք III, գլ. ԺԵ։

23. Տես նույն տեղում, գիրք III, գլ. ԾԵ։

24. Արշակունիներից հետո Ն. Պալիենցը, թե ո՞ւմից է օգտվել, դժվար է ասել։

25. Հմմտ. ՄԺ, 1, էջ 255։

26. Մի այլ ժամանակագիր սրա իշխանության տարիները նշում է 21, ՄԺ, 1, էջ 255։

27. Իմա Դավիթ Սանտուխի, տես և հմմտ. ՄՀ, 1, էջ 255, 259, ծանոթ. 3։

28. Իմա Թեոդորոս Ռշտունի, հմմտ. Մխ, 1, էջ 255, 259, ծանոթ. 4։

20. Հմմտ. Մխ, 1, էջ 255, 259, ծանոթ. 5։

30. Մի այլ ժամանակագիր սրա իշխանությունը նշում է 34 տարի, Մխ, 1, էջ 255.

31. Ոմանք սրա իշխանությունը նշում են երեք տարի, Մխ, 1, էջ 255, 259, ծանոթ. 7։

32. Հմմտ. Մխ, 1, էջ 255, 259, ծանոթ. 12։

33. Հմմտ. Մխ, 1, էջ 256, 260, ծանոթ. 13։

34. Այս մի բանիսի մասին աճա և հմմտ. Մխ, 1, էջ 256, համապատասխան ծանոթագրություններով։

35. Հմմտ. Մխ, 1, էջ 256։

36. Հմմտ. նույն տեղ, էջ 256, 260, ծանոթ, 10։

37. Հեղինակը բաց է թողել Աշոտ Երկաթի անունը, հմմտ. նույն տեղում, էջ 256, 260, ծանոթ. 20։

38. Վերոհիշյալ չորս թագավորների վերաբերյալ տեղեկությունները հմմտ. նույն տեղում, էջ 256, 260—261, ծանոթ. 22—24։

39. Հմմտ. նույն տեղում, էջ 256, 261, ծանոթ. 25։

40. Ըստ երևույթին 36 տարիների մեջ հեղինակը նկատի է ունեցել նաև Գագիկ Բ-ի պանդխտության տարիները՝ մինչև նրա սպանությունը 1079 թվին։ Հմմտ. նույն տեղում, էջ 90, ծանոթ. 1, էջ 256, 261, ծանոթ. 26։

41. Հեթում Բ-ն Ռուբեն Ա-ի իշխանությունը նշում է տաս տարի, տես նույն տեղում, էջ 74։

42. Հեղինակը նկատի ունի Ալ. Մակեդոնացուն, որովհետև, նրա կարծիքով սրանից մինչև Քրիստոսի ծնունդը 311 տարի է, (աճա վերևում, էջ 203) հետևապես նշված՝ 1409-ից եթե հանենք 311, կստանանք 1098, այն ինչ ցույց է տրված հույյան և հայկական թվականներով։

43. Կոստանդինի իշխանության տարիները սովորաբար նշվում է տաս տարի, աճա Մխ, 1, էջ 74, 75, 90, ծանոթ. 9։

44. Հմմտ. նույն տեղում, էջ 75։

45. Բնագրի ձախ լուսանցքում, միևնույն ձեռագրով, ավելացված է. «Մեծ Թորոսն է»։ Նույնը տես Ե տարբերակում, էջ 280ա։

46. Հմմտ. Մխ, 1, էջ 75—76։

47. Հմմտ. նույն տեղում, էջ 76, 92, ծանոթ. 27։

48. Բնագրի ձախ լուսանցքում, միևնույն ձեռագրով, ավելացված է. «Այս Լևոն առաջին Կիլիկեցի թագաւորեցաւ»։

49. Լևոն Ա-ի վերաբերյալ այս տեղեկությունները ստույգ չեն, հմմտ. Մխ, 1, էջ 51, ծանոթ. 9, էջ 76, 70։

50. Օշինի և հաջորդների վերաբերյալ տեղեկությունները հմմտ. Հեթում Բ-ի տարեգրության Ն. Պալիենցի շարունակության հետ, տես Մխ, 1, էջ 89։

51. Բնագրի ձախ լուսանցքում, միևնույն ձեռագրով, ավելացված է։ «Զոսայ ընդ եղբօրն իւր հայերն սպանին», նույնը աճա Ե տարբերակում, էջ 280բ։